Մենք կարող ենք բանակցութիւններ սկսել Ռուսաստանի հետ, ամուր և անսասան կանգնած Հայաստանի անկախութեան տեսակէտի վրա (բուռն ծափեր)։ *Եթէ կառավարութիւնն ընթանայ այս ուղիով, ժողովուրդն ու զօրքը նրան զօրավիդ կը լինեն* (երկարատև ծափահարութիւն)։

Խանդավառ ծափերի տակ ամբիոն է բարձրանում պատգամաւոր Սեպուհը։

Վերջին դէպքերն ինձ համար շատ տարօրինակ են, ասում է նա, ապրիլ 28–ին Ազրբէջանը առաջարկում է Հայաստանին յետ քաշել զօրքերը Ղարաբաղից՝ իր ուժերը բոլշևիկների դէմ տանելու համար և հենց ժամ յետոյ յայտարարում է խորհրդային իշխանութիւն։ Այս դէպքերը շատ նման են 1908 *թ. դէպքերին, երբ Տաճկաստանը յայտարարեց սահմանադիր երկիր. այո՛, յայտարարեց, բայց և անմիջապէս կազմակերպեց Ադանայի Հեռնուած Ջարդը։*

Այսօր, Ազրբէջանը դարձել է խորհրդային և երկու օր չանցած սպառնում է մեզ — ինչո՞ւ, որպէսզի իր զօրքերը Հայաստանի վրայով միացնէ Տաճկաստանի «կարմիր» զօրքերին, ա՛յն Տաճկաստանի, ուր չկայ, չի եղել և չի կարող լինել «կարմիր» զօրք, այլ կայ միայն կարմիր սուլթան։

Այդպիսի սպառնալիքներ հայ ժողովուրդը շատ է տեսել. ես պահանջում եմ կառավարութիւնից ոչ մի ուշադրութիւն չդարձնել։ Դրանք խաղեր են՝ սարքուած ազրբէջանեան կարմիր դահիճների ձեռքով՝ հայ ժողովրդին բնաջնջելու նպատակով։ Սակայն, նոքա չեն հասնի իրենց նպատակին, քանի կանգուն է մեր քաջարի բանակը։

Իմ զօրամասը այսօր ուղարկած հեռագրով խոստանում է կուել մինչև վերջին մարդը և մի թիզ հող չզիջել թշնամուն (խանդավառ ծափեր)։ *Ես յայտարարում եմ ձեզ, որ այդ ոգով տոգորուած է մեր ամբողջ բանակը. յենուած նրա վրա՝ կառավարութիւնն աներեր հաստատուն պէտք է առաջ տանի մեր հայրենիքի պաշտպանութեան գործը* (բուռն ծափեր)։

Երկրորդ վերջնագիրը ստացուած է Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների կողմից։ Մենք միշտ կարող ենք խօսել նրանց հետ, որովհետև ռուսական յեղափոխական բանակն ու յեղափոխական իշխանութիւնը մեզ համար բոլորովին այլ արժէք և այլ նշանակութիւն ունեն։ Սակայն, այն դէպքում ևս, կառավարութիւնը չպիտի մոռանայ, որ ամէն բանակցութեան և ամէն համաձայնութեան նախապայմանն է Հայաստանի անկախութիւնը։ Ես, իբրև զինուորական, ինձ հետ նաև հայ բանակը կոչուած ենք պաշտպանելու հայ հայրենիքի անկախութիւնը բոլոր վտանգների դէմ. դա է մեր դերադանց պարտքը, և թող կառավարութիւնը երբեք չմոռանայ, որ հայ բանակը դիտէ կատարել իր պատքը սրբութեամբ (երկարատև ծափեր)։

Լ. Թումանեան (*սոցիալ.–յեղափոխական*). — *Բաղդում կատարուածը կեղծիք համարելու հիմք չունենք. կատարել է յեղաշրջում. մուսուլմանական ոճրագործ դեկավարները հեռացել են ասպարէզից և իշխանութիւնն անցել է ռազմա–յեղափոխական կոմիտէի ձեռքը։ Գուցէ հին կառավարութիւնը յոյսեր ունի ազդելու նոր վարիչների վրա, բայց այդ տեղի ունենալ չի կարող, որովհետև Անդրկովկաս է իջնում ռուս յեղափոխական բանակը։*

Ա. Շիրինեան (*դաշ.*). — *Ճիշտ չէ, ասացէք Դաղստանի մուսուլման բանակը* (ծափեր)։

Լ. Թումանեան. — *Ռո՛ւս բանակը, որ չի հեռանայ Ազրբէջանից։ Այսօր հերթը հասել է նաև իմպերիալիստներին ծափահարող Հայաստանի «Մուսաւաթին»՝ Դաշնակցութեան, այժմ նա պէտք է հեռանայ ասպարէզից։*